ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ
№ 18

ՏԱՐԵԿԱՆ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆԵՐ

Թաւրիզում . . . . . 14 ղրան
Գաւառներում . . . . . 20 ղրան

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Ռուսաստան . . . . . 4 ռբ. 50 կ.
Թուրքիա . . . . . 50 ղրուշ
Եւրոպա . . . . . 12 ֆրանգ
Ամերիկա . . . . . 2 տոլար 5 ս.

Յայտարարութիւնների վճարը
Առաջին երեսում տողատեղը 10 շահի
Հոգերորդ „ „ „ 5 „

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐԸ 6 շահի

Խմբագրութեան հասցէն՝ Թաւրիզ
ՄԻՏՔ-ի խմբագրութիւն կամ Tauris (Perse)
Rédaction du journal «MITK»

ՄԻՏՔ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ—ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Մեզ գրողներից խնդրւում է գրեն պարզ, մաքուր և անպայման թղթի առաջին երեսի վրայ։
2. Խմբագրութիւնս իրեն է վերապահում իրաւունք՝ ստացուած յօդուածները փոփոխութեամբ և կրճատումներով հրատարակելու։
3. Մենք մերժում ենք „ու“ ի և „վ“ ի ուղղագրական հերձուածը և մեզ ենք վերապահում իրաւունք՝ ստացուած նիւթերը տպել մեր ընդունած ուղղագրութեամբ –ու–ով։
4. Զտպուած կարճ յօդուածները չեն վերադարձնում։ Ուղարկուած և չտպուած երկար նիւթերը յետ ստանալու համար պէտք է ուղարկել պօստի ծախսը։
5. Չի տպուի ոչ մի յօդուած եթէ դա կեղծ անուն հետ միաժամանակ չի կրի յօդուածագրի անուն ազգանունը։
6. Բաժանորդները թերթ չստանալու դէպքում շուտով տեղեկացնելու են մեզ՝ հակառակ դէպքում խմբագրութիւնս իրեն զերծ է համարում պատասխանատուութիւնից։
7. Զտպուած յօդուածների համար խմբագրութիւնս բացատրութիւններ չի տալիս։
8. Հասցէները փոխելու համար պէտք է մեզ ուղարկել 2 ղրան 10 շահի։

№ 18 1912 Թ. ՇԱԲԱԹ 30 ՅՈՒՆԻՍԻ 1912 Թ. № 18

ՍԱՐԱՃԵԱՆ ԸՆՏԱՆԻՔԸ իւր խորին շնորհակալութիւնը կը յայտնէ ամեն անոնց, որոնք ողբալի տիկին

ՎԻՐԳԻՆԷ ՍԱՐԱՃԵԱՆԻ

յուղարկաւորութեան մասնակցելով գրաւոր թէ անձամբ միխիթարեցին իրենց վշտացեալ սրտերը։

ԾԱԽՈՒ ՏՈՒՆ

Ծախւում է հանգուցեալ Նիկողայոս Մելիք Բաբաջանեանի տունը, որ գտնւում է Ղալի Բաղան թաղում։ Տունն ունի փողոցի կողմում երկու սենեակներ, երկուական ընդարձակ սանդուխանաներով իրենց յետևում։ Այդ սենեակների հանդէպ՝ բակի միւս կողմում կայ մի ընդարձակ հիւրասենեակ մի փոքր նախասենեակով։ Յետևում կայ նաև մի փոքրիկ բակ խոհանոցով և թոնրատնով։ Ձերզամիները ըստ ամենայնի յարմարաւոր են։ Գնել կամեցողները թող բարեհաճեն դիմել Արամեան դպրոցի հոգաբարձուներից պ. Ա. Տէր Կարապետեանին և կամ պ. Կոստի Բաբայեանին։

5—1

Ա Զ Դ

Մեզ հասած պաշտօնական մի գրութիւնից ուրախութեամբ տեղեկանում ենք, որ Պոլսում Տաճիկ կառավարութեան կողմից դադարեցուած և հայ լրագրութեանց մէջ բացառիկ դիրք գրաւած «ՆՈՐ-ԱՇԽԱՐՀ» օրաթերթը մօտիկ օրերում վերստին հրատարակուելու է։ խմբ.

ԲԱՆՈՒՈՐՈՒԹԵԱՆ ՁԱՅՆԸ

«Միտք»-ի №16-ի յաւելուածում Թաւրիզի բանուորութիւնից մի խումբ՝ ձայն բարձրացրեց կենտրոնականի պարտիզի մուտքի բարձր արժէքի առթիւ։

Ի՞նչ ասաց զրկուածների, ճընշուածների այդ համեստ ձայնը։

—Նա, մի կարգ դիտողութիւններից յետոյ, որոնք փաստում էին թէ կենտրոնականի պարտիզի մուտքի հանդիսաւոր օրերի վճար մի ղրանը չափազանց թանկ է գործաւոր ու արհեստաւոր դասի համար, շատ քաղաքավարի և բանուորական շատ պարզ ու յստակ լեզուով յայտարարեց.

—Ինչքան որ մենք իմանում*] ենք այդ պարտէզը պատկանում է հասարակութեան և ամեն մարդ էլ, թէ հարուստ թէ աղքատ թէ վաճառական և թէ բանուոր իրաւունք ունին մտնելու և զբօսնելու, իսկ յարգելի հոգաբարձութիւնը այնպէս գին է նշանակում որ մի բանուորի ամբողջ օրւայ աշխատավարձն է, որ իհարկէ չէ կարող տալ մի քանի ժամ զբօսնելու համար։—

Ո՞վ կարող է առարկել իւր պարզութեան մէջ զերճախօս այս արդարացի պատճառաբանութեան, որն անպայման պէտք է յարգել՝ ընդառաջելով բանուոր դասի չափազանց իրաւացի և կօրրեկտ առաջարկին։

Ո՞վ կբացասի թէ այդ պարտէզը հասարակութեան չէ պատկանում։ Իսկ ինչ արդէն հասարակապատկան է և մանաւանդ զբօսավայր, այլ ևս տրամաբանական չէ դրա համար կրկնակի ու եռակի վճար առնել։ Եւ այն էլ այնքան թանկ, որ խիստ ծանր է թէ բանուորի, թէ աշակերտ դասի, թէ բազմանդամ արհեստաւոր՝ անգամ միջին դասի մի ընտանիքի համար, որոնք նոյնպէս կկամենային կենտր-ի պարտէզը մտնել և օգտուել նրա թարմ օդից ու այլ բաւականութիւնից։

Բարերար Ե. Զոհրաբեանի 75,000 ռուբլու դրամով Ատրպատականցոց համար գնուելով այդ դպրոցական շէնքն ու նրա պարտէզը, դա այլ ևս դարձել է զուտ ժողովրդական մի սեպհականութիւն և որպէս այդպիսին՝ իսպառ աւելորդ է պարտիզի մուտքի վճար առնել։

Մենք այդ պարտէզը համարում ենք ճիշտ այնպիսի ընդհանրական ազատ զբօսավայր և հասարակական սեպհականութիւն, որպիսիք լինում են Ռուսաստանի և Եւրոպական քաղաքներում, որոնց զբօսավայրերից անխտիր օգտւում են անվճար մուտքով՝ հասարակութեան բոլոր խաւերը։ Այդ օրինակով էլ ազատ ու անվճար պէտք է լինի կենտրոնականի մուտքը մեր քաղաքի համայն հայ հասարակութեան առաջ։

Թերևս մեզ առարկեն, որ պարտէզը լուսաւորութեան, պարտիզպանի և ընթացիկ ծախքերի պէտք ունի, հապա դրանք որտեղից հոգալ։ Կպատասխանենք.

Նախ, որ այդ ծախսերը պիտի ծածկուեն հէնց բարերարի խոշոր գումարի տոկոսներից։ Բացի այդ, կենտրոնականի բաւական լաւ ոռճիկ և ընդ նմին փառահեղ բնակարան ստացող տեսուչ՝ ուսուցիչների հետ այնպէս պայմանաւորուել, որ նոցա ռոճկից դուրս գան որոշ քանակով տոկոս՝ յիշեալ ծախսերի համար։ Իսկ եթէ այնուհետև էլի պակաս կըզգացուի, այդ ժամանակ միշտ մի ընդհանուր հասարակական հանգանակութիւն կսկսուի, որից, իհարկէ, չի խուսափի անգամ մեր բանուորութիւնը։

Կենտրոնականի պարտիզի բացումով նախկին հասարակական զբօսավայրերը-հանգստարան, Աստուածածին և այլ տեղեր—արդէն մոռացութեան տրուեցան։

Եւ ի՞նչ արդիւնք ստացուեց դրանից։ Զբաւորները զրկուեցին թէ այդ նախկին վայրերից և թէ կենտրոնակից, որով և մնացին փողոցում։

Իւրաքանչիւր կիւրակի ահագին բազմութիւն կարելի է տեսնել խոնուած պարտիզի մուտքի առաջ՝ կանգնած վիզները ծուռ և աղաչական աչքերով՝ ածան գնով արժանանալու կենտրոնականի պարտէզը մտնելուն։

Սակայն զուր յոյսեր։ Մուտքի վճարն այնքան թանգ է նշանակուած որ չի թոյլատրում բաղդից չփայփայուածների ներս անցումը այդ երանելիների զբօսավայրը։ Իսկ եթէ այդ խեղճերից յանկարծ գտնուեն այնպիսիները, որոնք կուզենան անվճար մուտքով օգտուել պարտիզի հաճոյքից, այնպիսիք, ինչպէս փորձը ցոյց տուեց, պէտք է հաշուի առնեն իրենց կողու գլխի ջարդը պարտիզի «խնամոտ հսկիչներից»։

Մարդկային ստեղծագործող միտքը եթէ անսանձ բնութիւնից շատ ու շատ գաղտնիքներ է կորզել և նուաճումներ արել և շատ բաներ արգելքի տակ դրել, սակայն նա չի սեպհականացրել Աստուծոյ լոյսն ու օդը։

Մեր խեղճ բանուորութիւնը, որ իւր առողջ կազմուածքն ու թոքն է մաշում կօշկակարի անառողջ և կաշուէհոտ խանութում, դերձակի սակաւալոյս գործանոցում, հիւանի փոշառատ ու խոնաւ արհեստանոցում, արիւն քամող գրաշարանոցում և այլն, կարօտ է շաբաթը մի անգամ, մի կիւրակի օր, այդ մաքուր օդին ու պայծառ լուսին, սակայն այդ ևս զլացւում է նորան։

Կենտրոնականի արդոյ հոգաբարձուներ, բարի եղէք.

ազատ մուտք ու ճանապարհ բացել աշխարհի այդ խորթ զաւակների համար ևս, որոնց կարօտ աչքերում պարզ կարդացւում են.

Մթթէ այս հասարակական պարտիզից հալածուած ենք մնալու մենք, արդէն չար բաղդից հալածուածներս, և մեզ՝ իբրև մարդու հնար չի տրուելու միւս բաղդաւորների պէս ազատ զբօսնելու այդ ընդհանուր հասարակական վայրում։

Այդ մաշուած մարմինները, գունատ դէմքերը, թուլացած բազուկները եւ գրպանից անապահովները լի յուսով սպասում են, որ կենտրոնականի պատուարժան հոգաբարձութիւնը սիրով կյարգի իրենց առաջարկը։ Մենք ևս վստահ ենք, որ նա անարձագանք չի թողնի մեր ժողովրդի այս զրկուած դասի ձայնը։

*) Բնագիրն առաջ է բերուած անփոփոխ։ ծ. խ.

Մեր սկզբունքն է.–կամ բոլորովին ազատ ու անվճար մուտք անխտիր ամեն մի հայ և Եւրոպացի անհատի համար կենտրոնականի պարտէզը, կամ ամենաշատը 2 շահի վճար, եթէ ոչ բոլոր քաղաքացոց, գոնէ անպայման բանուորութեան, դպրոցական աշակերտութեան, կանտօրների ստորին կարգի ծառայողների, մինչև 10 տարեկան երեխաների և այլ այսպիսեաց համար։

Գէթ օդի ու բնութեան վայելքը մատչելի անենք անմենքի համար։ Դարձնենք կենտրոնականի պարտէզը իսկական ժողովրդական զբօսավայր։

Ահա, այս ենք ասում մենք և այդ է ասում նաև բանուորութեան ձայնը։

Լսենք այդ համեստ ձայնը։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԾՈՒՐՋԸ

Յունիս 22 (Ն. տ.)Փարիզ

Լուր է պտտում, թէ մի ֆինանսական սէնդիկատ, որ Տրանս-Պարսկական երկաթուղիի շինութեան մենաշնորհն ստանալու հետամուտ է, բանակցութիւն է սկսել Պարսից կառավարութեան հետ 12 միլ. Անգլ. ոսկու փոխառութիւն անելու։

Անգլիական պառլամէնտում արտ. գործոց նախարար Սըր-Էդուարդ Գրէյ պատասխանելով մի հարցապնդումի՝ ի մասին Պարսկաստանի երկաթուղիների քօնցեսսիայի, որը տրուելու է Անգլօ-Ռուսական մի ընկերութեան, կամ մի օտար սէնդիկատի, ասաց՝ որ այդ մասին որ և է ճնշում ի գործ դրուելու չէ, թէև այդպիսի մի ձեռնարկի յաջողութեան համար դիպլոմատիական աշակցութիւն Թէհրանում ցոյց կըրուի։

Անգլ. pերpից Մ. Պ.

Պարսկաստանի հարաւում համատարած աւազակութիւններ և սպանութիւններ են։

Յունիս 2-ին, Լօնդոնում, գիտութեանց ճեմարանում, Պարսկական ընկերութեան հովանաւորութեան ներքոյ, պարոն H. F. B. Lynch-ը [Լինչը] տուել է մի դասախօսութիւն «Պարսկաստանի կարևորութիւնը» վերնագրով։ Ժողովին նախագահել է Sir Thomas Barclay-ը։

Դասախօսութիւնը բաղկացած է եղել երեք մասերից։

I. Պարսից ներկայ սերունդը բաւական մեծամասել է և այնպէս է կարծում, որ Անգլիացիները բարեկամ են Պարսկաստանին լոկ իրենց շահերի տեսակէտից, որ մի պատնէշով բաժանուեն Ռուսաստանից և չլինեն արգելք առ դէմ ու անմիջական հարևանը։

Այս քաղաքականութիւնը, ասել է դասախօսը, իրաւ է եղել է մի ժամանակ Անգլիոյ դէպքիզը, սակայն այդ թողնուած է և ամէն ինչ այժմ երկիւղ չկայ Ռուսիոյ հետ անմիջական հարևան լինելուց։

II. Պարսիկների մեծամասութիւնը, ուրեմն, թէ մենք մեր երկիւղից ենք պահում Պարսկաստանը միանգամայն անտեղի է։ Որովհետև եթէ մենք ուզենանք և հարկ համարենք Պարսկաստանն էլ կվերցնենք և, պէտք եղած ժամանակ էլ, Ռուսիոյ անմիջական հարևանն ևս կարող ենք լինել։

III. Պարսկաստանի բաժանումը (որից միշտ վախենում են պարսիկները) բացարձակ թէ քօղարկուած՝ Ռուսներից կամ մեզնից, միշտ կարող է լինել, բայց մենք այդ բնաւ չենք ցանկանում, որովհետև մեզնից և ոչ մինը չի ուզում ոյժերի ահագին լարումով մեր սահմաններն այդ կողմից ընդարձակենք։

Պարսիկները խոհեմ վարուած կըլինին, եթէ գիտանան օգտուել մեր բարեկամութիւնից և հեռու լինելով երևակայական ու անխոհեմ քայլերից՝ չվտանգեն իրանց անկախութիւնը։

Անգլ-ից.

ԹՐՔՕ-ԻՏԱԼԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ
(Daily Telegraph-ից)

—

Հոչակաւոր թղթակիցը Անգլ. «Դէյլի Թէլեկրաֆ» թերթի, դօքտօր Տիլլօն, վերջերումս Օսմանեան սպարապետ և պատերազմական նախարար Ահմէտ Շէֆքէթ փաշայի հետ երկար մի տեսակցութիւն է ունեցել Կ. Պոլսում։

Յունիս 22-ին համարում (Ն. տ.) Մր. Տիլլօնը մի խիստ հետաքրքրական թղթակցութիւն ունի այդ մասին և, ի միջի այլոց, տալիս է Շէֆքէթ փաշայի հետևեալ վճռական խօսքերը։

«Թիւրքիան հաստատ կանգնած է և անդրդուելիօրէն կկանգնի մինչև վերջը։ Անցեալ ութամսեայ ժամանակամիջոցում շատ բան գրուեց լրագրների էջերում պատերազմի առթիւ, բազմադիմի քննադատութիւններ եղան, նպաստաւոր և անհնպաստ կնրծիքներ արտայայտուեցան։ Գալով ինձ՝ կասեմ, որ ես դիպլօմատ չեմ, այլ պարզապէս մի զինուոր։ Եւ իմ պարտականութիւնն է իմ հայրենիքի հողը ոգի՛ի բերն պաշտպանել։ Այդ ես արեցի, անում եմ և վճռապէս որոշած եմ անել մինչև վերջը։ Մեր բանակի գործն է՝ արգելել թշնամուն Թիւրքիայից մի թիզաչափ հող գրաւելու կամ իրացնելու։ Եւ այդ գործը մենք կկատարենք»։

—Կյուսա՞ք յաջողել։

—Անկասկած։ Ես ոչ միայն մեր զատի արդար փաստ լինելուն հաւատում եմ, այլ նաև մեծ հաւատ ունեմ մեր վերջնական յաղթութեան վրայ։ Ինչպէս կարող կլինէի պաշտպանել մեր երկիրը ընդդէմ օտար և անիրաւ ոտնձգութեանց, եթէ ես չունենայի սրբումս մի այդպիսի զօրացուցիչ հաւատ։ Շեշտում եմ, ես ունեմ այդ հաւատը ծայրագոյն աստիճանի և մեր դատակն յուսով ցոլուն տոգորուած է նրանով։

—Շատ բարի, բայց ինչպէս վերջանալու է պատերազմը։ Դա չի կարող ընդ միշտ տևել, ինչով կվերջանայ դա։

Այդ մի անտանելի խնդրի հարցում է։ Թիւրքիան չէ պատերազմը հրատարակողը և նրա իրքը պատշաղական է։ Յաւէտ և այդպէս էլ մնալու է միշտ։ Մենք բուռն և գերմարդկային ջանք ու ճիգ ենք գործադրում, որ մի գուցէ մեր ժողովրդեան մի մասը բռնի կերպով Իտալիոյ հպատակ դառնայ։ Եւ մենք պիտի յաջողենք։ Մենք չիանդարեցինք Եւրոպայի խաղաղութիւնը։ Մենք միայն մեզ պաշտպանում ենք ընդդէմ մի յարձակման, որը բոլորովին մի պրովոքացիա է անտեղի՝ և ոչ այլ ինչ։ Հետևաբար մեզ անկ չէ ասել, թէ երբ արդեօք կվերջանայ մաքառումը։ Այդ հարցը պէտք էր յաւէտ մեր հակառակորդին ուղղել։ Ես միայն այսչափը կարող եմ ասել, որ մենք մի թիզ տեղ էլ զիջելու չենք յաւիտեան։ Մենք կարող ենք յաջողապէս պաշտպանել մեր երկիրը ընդդէմ մեր ներկայ թշնամուն և վճռել ենք այդպէս էլ շարունակել։

Մ. Պաղտասարեան

ՔԱՂԱՔԱԿԻՐԹ ԵՐԿՐՆԵՐԻ ԶԻՆԱՒՈՐՈՒՄՆԵՐԸ

Ci vis pacum Para bellum!

Սա Լատիներէն մի հին ասացուածք է, որ նշանակում է, «եթէ խաղաղութիւն ես ցանկանում՝ պատրաստ եղիր պատերազմի»։

Գնահատելով այդ խօսքում արտայայտուած հեռատես իմաստութիւնը, Ամերիկայի Միացեալ Նահանգների կառավարութիւնը մի նոր տեսակի վիթխարի թնդանօթ է պատրաստել տալիս, որի միջոցով 26 մատնաչափ տրամագծով, 67 ոտք երկարութեամբ, 75 հազար օխանոց մի հսկայական ռումբ 15 մղոն հեռաւորութեամբ տեղի վրայ հնարաւոր պիտի լինի արձակել։

Տրէդնօթ կոչուած պատերազմական ներկայ սիստեմի ահարկու նաւերը այդ նոր ռումբերին դիմադրելու անկարող պիտի լինին, հետևաբար հարկ է լինում բոլորովին այլ տեսակ աւելի դիմացկուն Տրէդնօթներ կառուցանել։

ՇՈՒԵՑԱՐԻՈՅ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՈՅԺԸ

—

Շուեցարիան աշխարհի ամենախաղաղ երկիրն է 3½ միլիոն բնակիչներով։ Սակայն պատերազմի ժամանակ կարող է կռուի դաշտ հանել 500,000-նոց մի կազմ ու պատրաստ բանակ։ Իսկ տարեկան բիւրգէում պատերազմական մինիստրութեան ծախքը 25 միլիոն ֆրանգի է հասնում։

Եթէ ամենախաղաղ տէրութիւնը աշխարհի՝ այս դրութեան մէջ է այժմ, ինչ ասիճանի պէտք է հասած լինի պատերազմիկ ազգերի դրութիւնը։ կարող էք երևակայել։

Անգ-ից Մ. Պաղտ.

ՆԱԴՍՆԻՑ

Մեռաւ իմ Մուսան... մի կարճ ժամանակ
Լուսաւորեց նա օրն իմ մենութեան.
Խամրեց իմ ծաղիկ, հանգաւ իմ կըրակ
Մութ է անթափանց, մութն իրրև դամբան

Զուր եմ այդ արտում-յոգնած տանջանքից-
Ըսփոփիչ ձայներ վնտռում անձկալից։
Ոնոակոր եղաւ պսակս հոտաւէտ,
Ցանջւում եմ աներգ, աներգ մաքառում։

Անցեալում որքան վայելք ու աղէտ
Տեղի ունեցան իմ խեղճ նկուղում,
Ուզեմ և երկնի դմբէթը փայլուն
Կը ներացուի գլխիս ցոլքով ամենազեղ,
Արծաթեայ լրճեր կը փռուին հեռուն
Կը շարուին սիւներ շէնքերի շքեղ
Եւ կը բարձրացնեն լեռներ ճիւնպատ
Դէպ կապոյտ երկնի բարձրերձ ճակատ։
Իսկ այժմ՝ մենակ եմ... մութ, անկարեկից
Անկիւնը սրահի նայում է աչքիս.
Ինչպէս սև-թոչուն, որ պատուհանից
Զարտաշուք աչքով լինի նայելիս,

Նոյնպէս թևերով բաղխում է ուժգին
Մի ցուրտ փոթորիկ կէս գիշերային...
Մարմարեն հոյակապ ապարանքների
Մթութեան ծոցում հալուեցաւ իսպառ
Զքացան անհետ լեռներ վիթխարի,
Եւ յօշոտեցին այս սիրտը թշուառ
Տագնապ ու կսկիծ.
Եւ անզօրութեան արտասունքն ադի
Ցայտեց իմ աչքից։

Մեռաւ իմ Մուսան... մի կարճ ժամանակ
Լուսաւորից նա օրն իմ մենութեան.
Խամրեց իմ ծաղիկ, հանգաւ իմ կըրակ
Մութն է անթափանց, մութն իրրև դամբան ..

Թաւրիզ Մ. Պեռ.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

28 Մայիսի Նոր-Զուղա

„Apres moi le déluge“

Ֆրանս. առած.

Ակամայ յիշեցի Ֆրանսիական այս առածը, երբ Այվատեան եպիսկոպոսի հեռանալուց յետոյ պարզուեց շատ շատերիս համար թէ նա ինչքան սրտացաւ առաջնորդ է եղել մեր Ամենափրկչեան վանքի համար և թէ ինչքան բարեխղճութիւն է ունեցել իր եղբայր՝ Մկրտիչ Աղային գործի գլուխ բերելով։

Յայտնի է, որ Բագրատ վարդապետի հեռանալուց յետոյ, Սահակ եպիսկոպոսը ,,չը կրնալով մենակ ապրել“ Թէհրանից բերեց իր եղբօրը՝ որպէս ընկեր։ Եւ որպէսզի վանքի հացը Մկրտիչ Աղային հալալ լինի, առաջնորդը մի սնոտի պատճառով պաշտօնից հեռացրեց 30 երկար տարիներ ծառայող ծերունի տնտեսին, նրա փոխարէն իր եղբօրը նշանակելով։ Մինչ այդ, «անտէր Ամենափրկչեան վանքը» դարձաւ Մկրտիչ Աղայի սեփականութիւն, և ով էր որ կարող էր նրա կամքից դուրս գործել։

Աւելորդ համարելով մի առ մի արձանագրել Մկրտիչ էֆէնդու կատարած «ծառայութեան ցուցակը», որը աւելի քան խայտառակ ու անպատուաբեր է վանքի համար, մեզ հետաքրքրում է իմանալ թէ որտեղից մեր հոս-հոս աղան կարողացաւ մեկնելուց առաջ, իր մօտիկ բարեկամի միջոցով, 750 թուման նաչափ գումար փոխադրել Թէհրան, այն աղան, որը Թէհրանից եկաւ մի ձեռք հնամաշ զգեստով և որը, հաւաստի աղբիւրներից ստացած տեղեկութեան համաձայն, ոռճիկ չէ ստանալիս եղել վանքից։ Մեզ հետաքրքրում է իմանալ, թէ որ հաւատարիմ ծառայութեան համար, մեր աղա Մկրտիչը առաջնորդ-եղբօր հրամանով, մեկնելուց առաջ վանքի գանձարանից 200 թուման կլոր գումար նուէր ստացաւ։ Բանական չէր վանքի վրին աւելորդ բեռ լինելը։

Անշուշտ առաջնորդը գիտէր, որ Պարսկա-Հնդկաստանի իր թեմակալութեան օրերը համարուած են, այդ պատճառով ազատ ասպարէզ էր տալիս իր եղբօր կապրիզներին, փոյթ չէր թէ վանքը անտեսապէս տուժում էր։

Մի կողմ թողնելով վերոյիշեալները, ինչպէս և երկու եղբայրների մինչև էջմիածին ստացած անագին ճանապարհածախքը (Առաջնորդի համար տուած ճանապարհածախքը հասկանալի է, եղբօր համար ինչու), դեռ տեսէք, յարգելի ընթերցող, թէ Սրբազան և էֆէնդի Այվատեանները ինչքան «ազնիւ» ու «բարեխիղճ» են գանուել հեռաւեալ դէպքում։

Եղբարք Այվատեանները Սպահա-

նից մեկնում են վանքպպատկան երկու ձիերով մինչև Թէհրան։ Այնտեղ ձիերը և վանքապատկան մի հրացան վաճառում են և, ինչ թագցնեմ ընթերցող ... դրամը գրպանում (մօտ 200 թուման) և ճանապարհւում են դէպի էջմիածին ....։

Ահա թէ ում համար է ասուած «զմժղուկս քամէք և զուղտս կլանէք»։

Իրազեկ.

---

18 Յունիս Սովուչբուլաղ

ՄՈՒՋԱԼԼԱԼԸ ՓԱԽԱԾ

Այսօր լսեցինք, որ Գիւմիւշ Գեօլ գիւղից Մուջալալը փախել է։ Ի՞նչ միջոցով է փախել, պարզ չէ, բայց, ըստ պատած լուրերի, ասում են որ Միրզա-Հասան խանը՝ Սարդարը Մուքրիի նրան բռնելու ուղարկած լիազօրը, նրան բռնելուց յետոյ գնացել է Բօքան, Սարդարը Մուքրիի գիւղը, որ ձիաւորներ բերի Թաւրիզ փոխադրելու համար. այդ միջոցին նա գիւղից փախել է։ Գիւղատէր աղան մինչև Մարաղայի մօտերը յետևից մարդ է գցել։

Բայց, ինչպէս լուրերն են ասում, դրանք բոլորը պատճառաբանութիւններ են։ Միրզա-Հասան խանը ոչ թէ գնացել էր ձիաւոր բերելու, այլ Մուջալալի մօտ եղած չորս բեռ թղթադրամն ու ոսկին տարել էր Բօքան, որը մօտ 600,000 *) դրան է և պատուիրած կլինի գիւղատէրին, որ ազատ թողնէ այդ իշխանին և վերջինս էլ ուրախութեամբ կատարել է հրամանը։

Յամառ լուրեր են պտտւում, որ Սալար Դովլէն Մուջալալի մօտ է եղել մինչև Սինա, այնտեղից բաժանուել անցել է Տաճկաց սահմանները Բանի (!) կողմերը։ 2-3 օր է լսում ենք ,որ քաղաքումս է, տեղիս դատաւորը լրտեսներ է գցել բռնելու համար, երևի կարծում է, որ յիշեալ խոշոր գումարի չափ էլ գումար սրա մօտ կարող է լինել։ Սիրուշ Աբեղեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Մ. **ՔԱՂԱՔ (ՖՐԱՆՍԻԱ).**

—

Սիրելի Ալէքսան.

Ստացայ քո ուղարկած «Միտք»-ի առաջին համարները և ուրախացայ։

Ես սիրում եմ ամեն մի գործ, որ նուիրուած է բուն ժողովրդի շահերին։ Ես սիրում եմ ամեն մի Պարսկաստանցու, ով կատարում է իւր պարտքը մեզ դժբաղդ հայրենիքի վերաբերեալ։

Մենք ունինք մի շարք Պարսկաստանցի երիտասարդներ, որոնք հռչակուած են նոյն իսկ դօքտօրայի տիտղոսով, սակայն նրանցից ոչ մի օգուտ չստացաւ մեր հայրենիքը։ Արդ՝ ուրեմն, եաթքել եմ նրանց ալ՝ տիտղոսի ալ վրայն, քանի տէր դրանք չան չունին մեր ժողովրդին և մեր հայրենիքին։

Հայ բանաստեղծը գրել է այս խորհրդաւոր տողերը շատ տարիներ առաջ, երբ դեռ մեր իրականութեան մէջ շերտաւորում չկար։ Այնուհետև այդ խօսքերն անցան շովինիզմի շարքը, կամ գոնէ այդպէս համարեցին։ Սակայն ես գտնում եմ դա շատ սխալ։ Դրանք շատ գեղեցիկ և իմաստալի խօսքեր են։ Իւրաքանչիւր անհատ պարտաւոր է կատարելու իւր պարտականութիւնը այն միջավայրի վերաբերմամբ, ուր նա ծնել կամ՝ որի մէջ նա մեծացել է։

Թող ուրիշները իմ խօսքերն ընդունեն նացիոնալիզմ, այնուամենայնիւ ես պնդում եմ ասածիս վրայ և գովում բոլոր նրանց, որոնք չնայած չարակամութեան շաչող փոթորիկներին, կանգնած են հաստատամտօրէն և աներկիւղ գործում են իրենց շրջապատի, իրենց միջավայրի համար։

Այդ տիպի ցայտուն, աւելի ճիշտ՝ ամենացայտուն գործիչներից մէկը դո՛ւ ես։ Հետևապէս դու իրաւունք ունես պարծենալու, որովհետև դաւակ ես այդ երկրին և այժմ քո հասկացողութեամբ fn կարողութեամբ, կատարում ես քո պարտքը, միշտ լինելով համոզուած, որ դու ժողովրդին տալիս ես որոշ օգուտ, որի համար և դու լիակատար արժանի ես խրախուսանքի։

Տխուր է մեր հայ անհիւրընկալ, չկամ և չարակամ իրականը թիւնը։ Մտածել հասարակութեան համար, դա նշանակում է ուժեղացնել իւր թշնամիների բանակը [1]։

Բայց դու շարունակիր քո անվհատ և քո հոգուն վայել համարձակ պայքարը։ Շատերը խռովկան երեխի նման երես կըդարձնեն քեզնից, շատերը, որոնց խիղճն ու երեսը արդէն սևացած է իրենց անարդ ու բռնաւորական գործերից, քո կծու գրչի պատճառով, ընկած կանանց պէս, կսկսեն բամբասանք ու վարկաբեկում քո խըրոխտ անձի շուրջը։ Շատերը, քո նախկին բարեկամ-զինակիցներից, քո անկեղծ խօսքից ցնցուած՝ կանցնեն քեզ ատողների կողմը, այնուամենայնիւ անվհատ առաջ գնա, հասկացողներն ու իսկական գործիչները քո կողմն են ու քեզ ծափահարող։

Այդ բոլորից յետոյ քո յանդուգն խօսքիդ ու գրչիդ մի բան կբարեմաղթէի։

Աստուած չտար, որ հայկական ժլատութիւնը, չկամութիւնն ու քարասրտութիւնը յուսահատեցնէք քեզ և ստիպէր, որ ճարահատ թողնէիր քո խմբագրական համարձակախօս պրօֆեսիադ։ Տար Աստուած, որ մեր հասարակութիւնը, գլխաւորապէս մեր վաճառական դասը նիւթապէս քեզ աջակից ու յենարան լինէր քո մարտական մեծ գործում, ազնիւ պայքարում։ Լիայոյս եմ, որ, գոնէ, Թաւրիզի ողջախոհ, կուսակցամոլական ախտով չվարակուած, անկախ մտածող դասը քո կողմն է և անպայման ինձ նիւթական [2]) օժանդակութեամբ կօգնի քեզ ի յարատևումն ժողովրդօգուտ քո թերթի, որին, ինչպէս ասացի, խէթիւ կնայեն և կբամբասեն սև խղճով մեր յայտնի գործիչներն ու նոցա՝ ինքնուրոյնութիւնից զուրկ, մոլի հետևողները։

Միշտ համակրանքով դէպի քեզ քո ընկեր ***

---

*) Խմբագրութիւնս այս տողերի պատասխանատուութիւնից իրեն զերծ է համարում։ Ծ. Խ։

[1]) Ընդ գծումը մերն է [Ծ. Խ.
Իսկական մարգարէութիւն [« »

[2]) Ինչպէս յայտարարել ենք, մենք նիւթական շահ չենք սպասում և չունենք էլ այս թերթից, այլ այժմ կայ բացարձակ վնաս։ Սպասելի է որ մեր համակիրներն ու ունևոր դասը, ինչպէս ընդունուած է բոլոր ազգերում, իրենց սրտաբուղխ նուէրներով աջակցէին և հնար տային մեզ՝ յարատևելու երկար շատ երկար այս մեծ գործը։ Խմբ.

ԼՈՒՐԵՐ

ԹԱՒՐԻԶ

Արդէն յայտնի է, որ իր հրաւիրած չորրորդ ժողովը փակեց ինքը Կարապետ սրբազանը, երբ այդ ժողովի հրաւէրից յետոյ՝ իւր առաջնորդական տպարանում (իրենից ծածուկ և առանձին սրտաբացութեամբ հիւրընկալուած) տպուած մի թռուցիկով որոշ փորացաւով բռնուած ինչ որ «համերաշխականներ»՝ «քաղաքական քաջութիւն էին համարել» Յունիս 10-ի *) իրենց վիժեցրած ժողովի պատասխանատուութիւնը սրբազանի վրայ քցել։

Այդ վրդովիչ և աննեբելիօրէն սրտապատում թռուցիկից (տպուած թեմ. տպարանում) սրդոզած՝ սրբազանը ժողովը փակելով չբաւականանալով՝ մի վճռական յայտարարութեամբ ազդարարել էր, որ Վեհի օծման առթիւ էջմիածին գնալու լինելով, այնտեղ էլ կզեկուցի Վեհին եղածը և լինելիք հոգաբարձական ընտրութեան համար էլ նորին Սրբութիւնից կարգադրութիւն անել կտայ։

Սակայն երբ այդ ազդարարութիւնից յետոյ Ղալայի ծխականներից ներկայացան սրբազանին և ներկայացրին նաև 70 հոգու ստորագրութիւն և պահանջ դրին գործը էջմիածին քարշ չտալ, այլ քուէատուփ դնելառաջնորդարանում, այդ ժամանակ սրբազանը շտապեց անել էլի մի այլ կարգադրութիւն. այն է պատուիրել իր փոխանորդ տէր Կարապետ քահա-ին, որ նա 6-րդ ծխական ժողով կանչի, որի արդիւնքը պէտք է ուղարկուի էջմիածին վանն հաստատման։

Այս վերջին կէտը ամենքի մէջ կասկած և վրդովմունք է առաջացրել։ Ի՞նչ պէտք կամ ի՞նչ է տեսնուել որ մի հոգաբարձութեան հաստատումը էջմիածին ղրկուի։

Ամսիս 23-ին Շէշկիլանում կախուած էր Այդն փաշի քրոջ որդին։ Կախուել է Շուջաէդ-դովլի հրամանով։ Ասում են որ էլի կախուելու են 8 հոգի մարդիկ։

Առ հասարակ սպասելի և ցանկալի է, որ գործեն գթութիւնն ու մեղմ և ներող քաղաքականութիւնը։ Ներկայ խռովայոյզ ժամանակներում իւրաքանչիւր մի պարսիկ մարդու կամ պարսկաստանցու անձը կարող էր լաւագոյն պարիսպը լինել խռովարարների կամ ասպատակիչների դէմ մղուած կռիւներում, փոխանակ կախուելու։

Սահմանադրական Պարսկաստանը դալլի, ամբարի և ուտելեաց պաշարի վրայ արժէք և արգելքներ էր դրել։ Այժմ մի յայտարարութեամբ Շօջա-էդ-Դովլէն վերացրել է բոլոր այդ կարգի սակագներն ու արգելքները և ազատ է հրամայում ամենքին, որ ով ինչ ուզում է ծախի, ինչ գնով ուզում է ծախի, ցորեն ամբարի և այլն։

Առաջներում նոյնպէս՝ Պարսկաստանում, բացի սպանդագործերից (դասապներից), ով ուզէր իւր համար ոչխար, գառ և այլ կենդանիներ կմորթէր կամ ուտելու կամ ծախելու համար և ազատ էր որ և է հարկից կամ տուգանքից։ Սակայն անուղղակի հարկերի նշանակումից այս կողմ՝ այդպիսի մորթումների համար, իբրև աղիքի հարկ, առնւում էր 1 դրան, իսկ մորթող և ծածուկ ծախողից էլ տուգանք էր առնւում։ Այս արգելքն ևս Շօջա-էդ-Դովլէն ամսիս 22-ից, մի գրաւոր յայտարարութեամբ, ոչնչացուած է համարում և յայտնում, որ ով գառ, ոչխար, ըստ նախուն, կուզենայ մորթել թէ ուտելու և թէ ծախելու իւր ապրուստը հայթայթելու՝ բոլորովին ազատ է և ոչ ոքի պարտաւոր չէ 1 դրան հարկ նաև տուգանք տալ։

Այդ տուգանքը գանձում էր մաքսատան ենթակայ ակցիզի և աղիքային վարչութեան բաժանմունքը, որի հսկիչն է այժմս Բէլժիքացի պարոն Լէժէօնը։

Պարսկաստանում հնաստատ և գրաւոր օրէնքներ ջրինելու պատճառով, շատերը իրենց իրաւունք են համարում յանկարծ և առանց որ և է հիմքի մի անակնկալ պահանջ յարուցանելու մի անմեղ և անպարտ մարդու դէմ։ Գործը երկար հարց ու փորձից և չստուգուելուց յետոյ՝ վերջը հասնում էր մօլլի մօտ երդման և անպայման մի տուգանք հասնում էր անմեղ կողմին։ Նման «շեառերին» վերջ տալու նպատակով՝ Շօջա-էդ-Դովլէն մի օրէնք է հրատարակել, որ ով այդպիսի պահանջներ յարուցանի և դատարանում հաստատել չկարողանայ, այնպիսին պարտաւորւում է անպայման վճարել դատարանական բոլոր ծախսերը։ Սա մի լաւ և արդար օրէնք է, որով շատ անմեղ մարդկանց օձիքը կազատուի «ճանճալ» և «շեառ ու շիւռ» մարդկանցից, որոնք, ինչպէս ասում են, կրուիւը ծախու առնող մարդիկ են։

23-ին, երեկոյեան ժամը 5-ից զգալի կերպով սկսեց վատանալ եղանակը, փչող քամին ու փոշին յանկարծ սաստկացաւ, ամբողջ երկնքի երեսը բռնեց խիստ ու խիստ փոշին, որին յաջորդեց մի թեթև անձրև։

Մեզ յայտնում են որ, 10 մանրամասն և 8-ածալ էջերից բաղկացած մի նամակով Սարդար Ռաշիդը յայտնում է իւր՝ ընդդէմ Շահսովանների ունեցած յաջողութիւնների մասին։ Եթէ այդ ճիշտէ, ապա ինչպէս բացադրել Թաւրիզից՝ այդ նպատակով Ռուսական զօրքի մեկնումը, որ սկըսուեց Յունիս 22-ից։

Մեզ յայտնում են, որ Պեսերբուրգից վճռական կարգադրութիւն է եղել անխնայ ջարդել Շահսովաններին։ Այդ նպատակով, ինչպէս լսեցինք, Աստառից անցնելու են 10,000 ռուս զօրքեր, որոնք տեղիս ռուսական զօրքերի հետ վճռական հարուած պիտի տան այդ անհանգիստ և վայրենի բնաջղներով օժտուած տարրերին-Շահսովաններին, որոնք հէնց ամենամեծ պատուհասներն են իրեն-Պարսից պետութեան։ Ռուսաց պատմութեան լաւագոյն էջերից մինը պիտի լինի և՝ Շահսովանների նուաճումը ու նոցա խաղաղ կեանքի ընտելացնելը։

Լսում ենք որ Շահսովանները հիմնայատակ աւերել, թալանել և զրկ բաղդացրել են 67 գիւղեր։ Այդ գիւղերի մէջն են և Հաջի Նիզամ Դովլի գիւղերը։

Յունիս 27-ի գիշերը՝ լոյս 28, ժամը 1-ին թեմիս առաջնորդ Կարապետ սրբազանը կառքով մեկնեց քաղաքից դէպի էջմիածին։

---

*) Նոյն օրը Թիֆլիզում կատարուել է Մ. Յովնանեան դպրոցի հոգ. ընտրութիւն Մողնու ծխականների կողմից, նոյնպիսի սկանդալ և բռնութիւն թայֆայականները կատարել են և այնտեղ։ Ո՞րքան նման են այս «քաջերը» ամեն տեղ և ամեն բանում իրար։ Ծ. Խ.

Ռաճաբ 21 թուով (Յունիս 24) Շօջա-էդ-Դովլի ստորագրութեամբ փակցուած էր պատերին հետևեալ յայտարարութիւնը։

Տներում և այգիներում երեկոյեան դէմ ով հրացան արձակի, այնպիսին կձերբակալուի քաղաքիս ռուսական զօրմասից ու խիստ կպատժուի, իսկ այդ տեղն էլ հիմայատակ կկործանուի։

Մեզ խնդրում են յայտնել, որ վաղուայ պատարագը մատուցուելու է Ս. Աստուածածնի այգում։

Ամսոյս 28-ին Սալմաստից դարձան առաջն. փոխանորդ Տ. Կար. քհնն. և գործավար՝ պ. Գասպար Օհանեանը։

ԱՐՏԱՔԻՆ

Ալբանական ապստամբութիւնը դարձել է այժմ մի անշիջելի հրդեհ, որովհետև նրան միացել են յայտնի Մալիսոր և Միրիդիտ ցեղերը։ Միւս կողմից՝ Թիւրքական երկու վաշտ և մի հեծելազօր անցել են ապստամբների կողմը։ Սպասւում են արիւնահեղ ճակատամարտեր։ Ամեն օր Կ. Պոլսից ուղակւում են զօրքեր։

Չինաստանը շատ խառն է, հարաւը հիւսիսի դէմ կատաղի կռիւ է յայտարարել։ Կանտօնում զլխատուեցին 50 անկարգապահներ։ Չինաստանը Ամերիկայից 600 միլիոնի փոխառութեան բանակցութիւններ է վարում։

Ալբանական խրոխտ ապստամբութեան առաջ՝ ղեկավար Եր. Թիւրքերը գլուխները կորցրել են։ Նախատեսնւում է մինիստրական ճգնաժամ։

Թիւրք օֆիցերական շարժումը նպատակ ունի ի գահ կոչել Թիւրքական այժմեան գահաժառանգ պրինց Եուսուֆ Իզէդդինին, որ մեծ ժողովրդականութիւն է վայելում զինուորների մէջ։ Կազմակերպւում է յեղափոխական զօրք Կ. Պոլիս դիմելու համար։

Աւստրիան շարունակում է զօրքեր կենտրոնացնել Սերբիական սահմանագլխի վրայ։ Աւստրիայի նպատակն է շարժուել դէպի Սալոնիկ։

Կ. Պոլսի զօրքերի մէջ ևս սկսուել են յուզմունքներ։ Դրութիւնը դառնում է վտանգաւոր։ Կառավարութիւնը դժգոհների վերաբերմամբ չէ վստահանում զինուորական ոյժ գործադրել, երկիւղ կրելով ընդհանուր ապստամբութիւնից, որից կբռնկուի երկրորդ յեղաշրջում։

Ամեն րոպէ Կ. Պոլսում սպասւում է սեծ վիզիր Սայիդ փաշայի և զինուորական մինստր Շեվքէթ փաշայի հրաժարականը, որովհետև ներկայ կացութեան մէջ նրանք անկարող են մնալ կաբինէտի կազմում։

Կանտօնի (Չինաստան) զօրքերը քաղցած ազգաբնակութիւնից գնեցին 800 աղջիկ՝ Կանտօնի անառականոցներին վաճառելու համար։ Աղջիկները խլելու փորձի ժամանակ զինուորները սպանեցին մի քանի ոստիկանների։ Զինուորական դատարանի որոշմամբ՝ բոլոր դրդիչները գնդակահարուեցին։

Գերմանական կայսր Վիլհելմը Կիտերլէն-Վէխտերի հետ Յունիս 23-ին գալիս է Բալթիական ջրերը Ռուսաց կայսեր տեսութեան։ Կ. Վէխտերը Սազօնովի հետ խօսելու է բացառապէս Թիւրք-Իտալական պատերազմը վերջանալու հարցի մասին։

Լրագիրները հաղորդում են, որ Աւստրիային աջողուել է կազմել Բալկանեան պետութիւնների լիգա (միութիւն), որի մէջ մտել են Սերբիան, Բոլգարիան, Ռումինիան և Չերնոգորիան։ Սպասւում է Յունաստանի համաձայնութիւնը։

Լրագրներից։

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔ

Կ. Պոլսից հեռագրում են. «Թիւրքիայում ամեն ուրեք բռնութիւններ են կատարւում հայերի վրայ։ Եալովայի ժօտերը Թիւրքերը սպանեցին շատ հայերի։ Եալովայի գայմագամը առաջ, Հայկական յայտնի Ջարդերի ժամանակ, Ադանայի կառավարիչն էր»։ Իդդիհադի հետ համերաշխած և ծայրայեղօրէն խաբուած Դաշնակցութիւնը իւր տուած մեծամեծ խոստումների դիմաց ոչինչ անել չի կարողանում։ Հայերը յուսահատ են։ Ներքին գործոց մինստրը Պոլսի հայ խմբագիրներին կանչելով՝ խստի արգելել է ոչինչ չգրեն Անատոլուի հայերի մասին։

ՊՕՍՏԱՐԿՂ

Խնդրում ենք Մարաղի, Ումիոյ, Ղազվինի, Ռէշտի, Աստառի, և Թէհրանի մեր գործակալներին, որ փութան ժամ առաջ «Մտքի» բաժնեգները մեզ հասցնել։

Մեր նիւթականը չի ներում չորս ամսից աւելի ապառիկ թերթ ուղարկել։

Թաւրիզի 20-ից աւելի մեր արգոյ բաժանորդներին ևս խնդրում ենք շուտով մաքրել իրենց հաշիւները։ Մենք կանգնած ենք անխուսափել և պարտադրաբար կանխիկ վճարումների առաջ։ Խնդրում ենք հնար տալ մեզ՝ անսայթաք մեր գործն առաջ տանելու և այլ ևս այսքան չյիշեցնելու վճարման մասին։

ՄԵՐ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐՆ ԵՆ

Մարաղում պ. Յ. Տր. Վարդանեանը
Ուրմիում « Ա. Միրզաջանեանը
Աստառում « Ա. Բժշկեանը
Ռէշտում « Մ. Պատմագրեանը
Էնզէլիում « Բ. Մկրտչեանը
Ղազուինում « Ա. Տ. Յակոբեան
Թէհրանում « Պ. Միքայէլեանը
Սպահանում « Ն. Դաւթեանը։

Խնդրում ենք մեր բաժանորդներին շտապեն իրենց բաժնեգները յանձնել վերոյիշեալներին, բոլոր առաջ մեզ հասցնելու համար։

Խմբագիր-հրատարակիչ՝
Ա. Տ. Վարդանեան

26-ին իւր տնում յանկարծամահ եղաւ ազգային-եկեղեցական հաստատութիւններին մշտական նուիրաբերութիւն անող Խաչիկ խան Սարաճեանի ամուսին Վիրգինէն։ Յուղարկաւորութիւնը կատարուեց Յունիս 27-ին։

Թաղման ժամանակ պ. Մինրան Բաղդասարեանը խօսել է ազգու դամբանական։

Հանգուցեալ տիկինը նախքան զէպի յաւիտենականութիւն անցնելը միջոց չի ունեցել իւր սիրած քաղաքացոց մի գեղեցիկ յիշատակ թողնել։ Յուսանք այդ կանէ այրիացեալ պ. Խ. Սարաճեանը։

Խմբագրութիւնս իւր ցաւակցութիւնն է յայտնում վշտացեալ ընտանիքին։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱՑՈՒԵԼ Է ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑՈՒՄ ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ
բուժարան (լեչէբնիցա)
Արժէքները չափազանց մատչելի են։ Աղքատները բշժկւում են բոլորովին ձրի։ Հիւանդներ ընդունւում են առաւօտեան ժամը 8—1, երեկոյեան ժամը 3—6
ՀԻՄՆԱԴԻՐ ԱՏԱՄՆԱԲՈՅԺ՝ ՄԱՏԻՆԵԱՆ

МАГАЗИНЪ ПАРИЖЪ
MAGASINS DE PARIS-TABRIZ.
PROPRIÉTAIRE J. D. THOMASSIAN

ՓԱՐԻԶ ՄԱԳԱԶԻՆ
ԿԱՆԱՑԻ ՆՈՐ ԲԼՈՒԶՆԵՐ
ՓԷՇԵՐ ԵՒ ԻՄՊԿԱՆԵՐ
ՆՈՐ ԿՏՈՐՆԵՐ
ԵՒ ՋԱՆԱԶԱՆ ԳՆԻ ՊԱՏԻՍՏՆԵՐ
ՕՋԱՂՆԵՐ ՋԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿԻ
ԵՒ ԼԻՍՏ ԱՃԱՆ
ՇՏԱՊԵՑԷՔ ՕԳՏՈՒԵԼ ԱՌԻԹԻՑ

Նշանդրէքի և հարսանեաց բոմբոնները և շիրինները, կանացի բաթիսթեայ զգեստները, տղամարդկանց անգլիական հրաշալի կտորներ և թարմ շոկոլադներ։

ԳԱՐՈՒՆ
(ՄԱԳԱԶԻՆ ՄԻՍԱԿ ԲԺՇԿԵԱՆԻ)

Նոր ստացել են ՄԵՏՐՈՊՈԼԻՏԱՆ ԸՆՏԻՐ ԲԼՈՒԶՆԵՐՈՒՆԵՐ, ՍՊԻՏԱԿ ԼԱՒ ՀԱԳԵՐՆԵՐ, տղամարդկանց ԿՈՇՏ ԳԼԽԱՐԿՆԵՐ, ԵՐԿՈՒՏԱԿ ՎԱՐՈՒՑՆԻԿՆԵՐ, ճաշակաւոր ԳԱԼՍՏՈՒԿՆԵՐ, անձեռոցիկներ, երեխաների գլխարկներ և զանազան տեսակի հետաքրքիր խաղալիքներ։
Ընդունելով ԵԼԻԶԱՐԵԹ ՍԵՔԼԷՆՈՎՆԵՐԻ ԵՐԻՏՏԱՍԱՐԴԱՆ ՏԷՆ ներկայացուցչութիւնը, պատիւ ունիմ յայտարարելու ի գիտութիւն սպառողների, որ ընդունում եմ նոյն ֆիրմայի պատրաստի պապիրոսների պապիրոսների և ծխախոտների պատէրները։ Պատէրներ կարելի է տալ 50000 հատից սկսած. իրրև կանխավճար վերցնում ենք 100-ին 15 0|0 գները հաշւում ենք գործարանի հաշուով, ցանկացողները կարող են վերցնել պրէյսկուրանտ։

ТАВРИЗСКАЯ ГОРОДСКАЯ
Больница

Возобновился амбулаторный и стаціонарный пріембольныхъ, ежедневно отъ 10—12 часовъ.
Бѣдные по запискѣ отъ г. Байларбеги принимаются безплатно
Завѣдующій больницей
докторъ Ваганъ Геворковъ

ԲԱՂՆԻՍ Ա. ՏԵՐ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ

Ի գիտութիւն Թաւրիզի յարգոյ հասարակութեան յայտարարում ենք, որ բաղնիսի ջուրը, որ առաջ մատակարարւում էր Ղալա Թաղից, այժմ բերւում է Լիլաւից։

Այն չքաւոր կանայք և աղջիկները, որ առաջ մարդագլուխ վճարում էին չորս աբասի, այժմ մի մի աբասի պակասեցուած է նոցա այդ տուած նախկին արժէքից։ Յաճախողները խիստ գոհ կմնան բաղնիսի մաքրութիւնից և ջրի լաւութիւնից։

ԳՕՔՏՕՐ ՍԱՐԳԻՍԸ

Ամեն ուրբաթ օրերը ժամը 2-ից, կէսօրից յետոյ, ձրի խփում է աղքատների և չքաւորների երեխաների ծաղիկները։

Տպարան „ ՓԱՐՈՍ “